

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Р Е Ц Е Н З И Я

ՀԱՎԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՐԻՆՎԱԾՔ

Մի քանի ամիս առաջ լույս տեսավ Ս. Այվազյանի «Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից» գրքուկը («Լույս» հրատարակչություն, Երևան, 1986), ուր քննարկվում են հայ մշակույթին և նրա պատմությանը վերաբերող մի շարք կարևոր հարցեր: Հեղինակը փորձում է հավատացնել ընթերցողին, որ ինքը կատարել է հայտնագործություններ հայագիտության բնագավառում: Ավելին՝ նա պնդում է, որ իր «գրքում լուսաբանված են հիմնականում այն հարցերը, որոնք, առանց չափազանցության, հեջաշրջային (sic) նշանակություն ունեն հայերի հնագույն պատմության և հայոց գրերի բնագավառներում» («Գրքերի աշխարհ», 1986, 22 հունիսի, № 6):

Ի՞նչ «գյուտեր» է կատարել Ս. Այվազյանը: Բայց մինչ այդ հարցին պատասխան տալը մենք ավելորդ չենք համարում ընթերցողի ուշադրությունը հրավիրել երկու հանգամանքի վրա:

Առաջին. հայագիտության մեջ «հեջաշրջային հարցեր» լուսաբանող այդ գրքուկը լույս է ընծայվել ոչ գիտական հրատարակչության կողմից: Ինչու՞ էլիստ երևույթին այն պատճառով, որ այդպիսի «նախաձեռնություն իր վրա չէր վերցնի և ոչ մի դիտական հրատարակչություն: Իսկ եթե «Լույսի» ղեկավարությունը, որի խնդիրն է, ինչպես հայտնի է, հրապարակել դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, մեթոդական գրականություն և այլն, որոշել էր միջանհայտ պատճառներով անպայման լույս աշխարհ բերել Ս. Այվազյանի աշխատանքը, ապա այդ դեպքում պետք է արվեր մի շատ տրամաբանական ու անհրաժեշտ քայլ. հայագիտության խնդիրներին նվիրված այդ գրվածքը ուղարկել հայագիտական գիտահետազոտական ինստիտուտներին՝ կարծիք ստանալու համար: Հայտնի է, որ ՀՍՍՀ ԳԱ կազմում գործում են պատմության, հնագիտության և ազգագրության, Հ. Աճառյանի անվան լեզվի, արևելագիտության ինստիտուտները: Չենք կասկածում, որ գիտական այդ հիմնարկները կտալին անաչառ կարծիք, բարի խորհուրդ և տեղյակ կպահան «Լույս» հրատարակչությանն այն մասին, որ Ս. Այվազյանի այժմյան «հայտնագործումների» մի զգալի մասը հրապարակվել է դեռևս 1959 թ. լույս ընծայած նրա «Հայկական սեպագրերի վերծանությունը» գրքում, որը լույս տեսնելուց մի քանի օր հետո հանվեց շրջանառությունից իբրև հակագիտական ձեռնածությունների հավաքածու (ի դեպ, այն հրատարակվել էր ռոտապրինտով, ձեռագրի իրավունքով, ընդ որում ոչ օրինական ճանապարհով): Կարծում ենք, որ եթե «Լույս» հրատարակչության հարգելի ընկերները իմանային այդ մասին, ապա այլ մոտեցում կունենային Այվազյանի ներկա գրքուկի հրատարակության հարցում:

Երկրորդ. զարմանալի չէ՞ արդյոք, որ հայագիտության բնագավառում «հայտնագործություններ» կատարող հեղինակը մասնագիտությամբ երկրաբան է (երկրաբանական-հանքաբանական գիտությունների թեկնածու) և ոչ թե պատմաբան, բանասեր կամ լեզվաբան: Մի գուցե տեսականորեն հնարավոր է, որ գիտության մի բնագավառում հեջաշրջում կատարի մեկը՝ չլինելով այդ բնագավառի մասնագետ: Սակայն ներկա դեպքում այդ բացառված է և ահա թե ինչու: Մասնագիտական կրթություն չունենալու պատճառով, Այվազյանը անում է բանասիրական ու ստուգաբանական զավեշտական մարզանքներ: Այսպես օրինակ, ամենայն լրջությամբ մեզ հավատացնում է, որ Մեծամոր

(Մեծամոր) նշանակում է «մեծ մայր», ավելացնելով, որ դա «հին հայկական հեթանոս դիցուհի Անահիտի մակդիրն է կամ երկրորդ անվանումը»: Եվ հեղինակը արունակ դործ է ածում Անահիտ-Մեծամայր արտահայտությունը: Մեծամոր տեղանվան բացատրությունը հայտնի է ամեն մի շարքային բանասերի. բառը բաղադրյալ է՝ կազմված մեծ և մոր (մոր) արմատներից. վերջինը նշանակում է «տիղմ, ցեխ, ցայռ, շղախ, ջրախառն, սիկ, ճահիճ, եղտիւր, վայր աղտախտին, ջրշիղջ թանձրահիթ» (սնոր րառգիրք հայկազեան լեզուի»), 1. Կանգնած ջուր, ճահիճ, 2. Ջրախառն տիղմ, տղմուտ տեղ: 3. Խորունկ տիղմ, որ ներս է բաշում, խրուտ» (Ստ. Մալխասյանց. հայերեն բացատրական բառարան), «Ցեխ, տիղմ, ճահիճ» (Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան): Բառարանները տալիս են նաև Մեծամոր տեղանվան բացատրությունը. «Անուն գետույ, իբր մօրոտ, այսինքն տղմուտ, պղտոր» («Հայկազեան բառարան»), «Մեծ Մօր, մեծ ճահիճ, հատուկ անուն գետի, որ բխում է Այրարատյան դաշտում և այժմ կոչվում է Սև ռուր» (Ստ. Մալխասյանց. Հայերեն բացատրական բառարան):

Այվազյանը մեծ համարձակությամբ բացատրություններ է փակցնում բառերին, անտեղյակ լինելով հին հայերենի կամ գրաբարի բառակազմության տարրական օրենքներին: Նա, օրինակ, չի ըմբռնել, որ իբրև անվանում (ուղղականաձև) հանդես եկող Մեծամոր բարդության մեջ վերջին բաղադրիչը ոչ թե սեռական հոլովով է դրված, այլ ուղղականով:

Ակնհայտ է, որ Մեծամոր բառին տրված «մեկնությունը» անգիտության հետևանք է: Բայց հեղինակը այստեղ միաժամանակ դիմում է մտածված կեղծիքի: Նա գրում է. «Ըստ Պատմահայր Մովսես Խորենացու Մեծամորը (բառացիորեն «Մեծ մայր») հին հայկական հեթանոս դիցուհի Անահիտի մակդիրն է կամ երկրորդ անվանումը» (էջ 105—106): Իրականում Մովսես Խորենացին ոչ մի տեղ նման բան չի ասում: Նկատենք, որ Անահիտ անունն ընդհանրապես Խորենացու մոտ չկա: Բերված փաստերը բավական են, որպեսզի գաղափար կազմենք հեղինակի լեզվագիտական կարողությունների վերաբերյալ և այն մասին, թե ինչպես են արհամարհվում գիտական էթիկայի տարրական պահանջները նրա գրքույկում:

Այվազյանի ամենամեծ «հայտնագործությունը» վերաբերում է հայ ժողովրդի էթնիկական ծագման հարցին: Առանց հարկ եղած լրջության, գրչի մեկ հարվածով նա «լուծում» է այդ խնդիրը և համարձակորեն պնդում, որ հայերի նախնայրերը Հին Արեւելքի պատմության մեջ հայտնի հիբոսներն են: Մի այլ տեղ էլ, մի կողմ թողնելով «նախահայրեր» բառը, անվերապահ հայտարարում է, որ հայերը ոչ ավել ոչ պակաս հիբոսներն են (տե՛ս «Գրքերի աշխարհ» թերթում տպված նրա հարցազրույցը):

Հիբոսների մասին տեղեկություններ են պահպանվել մ. թ. ա. IV դարի վերջին և III դարի սկզբին ապրած եգիպտական քուրմ Մանեթոնի երկում: Մանեթոնը գրել է «Եգիպտոսի պատմություն» 3 հատորով, հունարեն լեզվով: Նրա աշխատությունը, սակայն, չի պահպանվել և գիտությանը ծանոթ է հետագա պատմիչների, հատկապես Եվսեբիոս Կեսարացու և Հովսեպոս Փյաւի հիշատակներով, որոնք օգտագործել են նրա պատմությունը:

Եվսեբիոս Կեսարացին, որին մեկից ավելի անգամ վկայակոչում է Այվազյանը, հիբոսների մասին գրել է. «Եւ կոչէր համօրէն տղզն նոցա հիւկուսին, այսինքն թարգմանեալ կոչի թագաւորը հովիւր. քանզի հիւկն յաղնի լեզուն եգիպտացոցն՝ թագաւոր նշանակէ. և ուսուսն հովիւ է. և հովիւք և քստ հոսարակաց խառնիղանձն խօսից, և ընդ միմեանս յօղեալ լինի հիւկուսուս: Բայց ոմանք ասեն ղնոցանէ՝ թէ արարացիք էին: Իսկ յայլում օրինակի ոչ թագաւորն նշանակէ հիւկն յորջորջմամբ և հովիւս յայտ առնէ. քանզի հիւկն դարձեալ եգիպտացերէն, և հակն թանձրացեալ աղփին հանդերձ՝ դետիս իսկ յայտ նշանակէ: Եւ այս իսկ առաւել հաւանութեան թուի ինձ, և յունկ ի հին պատմութեանն» (Եւսեբի Պամփուլիայ Կեսարացու ժամանակակից. մասն Ա, Վենետիկ, 1818, էջ 226—227):

Մոտավորապես նույնն է գրում Հովսեփոս Փլավիոսը: Նա բերում է Մանեթից մասնավորապես այն տողերը, որոնցում ասվում է, թե եգիպտական Իիմեյ (Թիմեոս) թագավորի ժամանակ «աստված բարկացավ մեղ վրա. Ասիայից անսպասելի կերպով հայտնվեցին ստոր ծագում ունեցող մարդիկ, որոնք ներխուժեցին մեր երկիրը և ուժով տիրեցին նրան, առանց լուրջ դիմադրության: Իշխանապետներին գերի վերցնելուց հետո, նրանք կրակի մատնեցին մեր քաղաքները, կործանեցին աստվածների տաճարները և բնակիչներին ենթարկեցին բաղձապիսի դաժանությունների՝ ոմանց սպանեցին, մյուսներին՝ կանանց և երեխաներին, ստրկացրեցին» (Josephus. I, London, 1958, թ. 193): Այնուհետև ասված է, որ այդ ժողովրդին կոչում էին «Հիքսոսներ», այսինքն՝ հովիվ-թաղավորներ. որովհետև սուրբ լեզվով «Հիք» նշանակում է «թագավոր», իսկ «սոս»՝ հովիվ, այստեղից էլ՝ «Հիքսոս»:

Ինչ են ասում Հիքսոսների մասին մասնագետ գիտնականները:

«Միջին թագավորության վերջում, մ. թ. ա. XVIII դարում, Եգիպտոս են ներխուժում օտարերկրյա ասիական ցեղեր, այսպես կոչված Հիքսոսները: Անտիկ հեղինակների մոտ պահպանված հետագա պատմական ավանդույթը այդ ցեղանունը բացատրում է որպես եգիպտական «հովիվների իշխողներ» բառերի աղավաղում: Հիմք կա ենթադրելու, որ «Հիքսոսներ» անվանումը իսկապես ծագում է եգիպտական ինչ-որ բառերից, թերևս «անապատային երկրների իշխողներ»՝ հեկաու-հասուտ բառերից: Հստ երևույթին, եգիպտացիք այդպես էին կոչում քոչվոր ասիական այն ցեղերի իշխողներին, որոնք ապրում էին Եգիպտոսից հյուսիս-արևելք» (В. И. Авдеев. История Древнего Востока. М., 1970, с. 191, 192):

«Դատելով Հիքսոս թագավորների անուններից, Հիքսոսները իրենցից ներկայացնում էին ցեղերի բարդ կոնգլոմերատ, որի կազմի մեջ մտնում էին, մասնավորապես, սեմական, խուտիական և այլ ցեղեր» (նույն տեղում, էջ 182):

«...մ. թ. ա. XVIII—XVII դարերի սահմանագծում արևելքից, Սինայի թերակղզով Եգիպտոսի վրա թափվեցին զավթիչ-Հիքսոսները, որոնք ներկայացնում էին Հարավային Սիրիայում և Հյուսիսային Արաբիայում բնակվող ցեղերի միություն, իրենց էթնիկական կազմով, հնարավոր է, ոչ միատարր» (История Древнего мира. М., 1982, с. 124, 125):

«Հիքսոսյան թագավորների անունները բոլորն էլ արևմտասեմական են, իսկ Հիքսոսները, հավանաբար, իրենցից ներկայացնում էին արևմտասեմական ցեղերի «համաձուլվածք» տեղական խուտիական տարրի զգալի մասով» Древняя Анатолия. М., 1985, с. 200):

Հին Արևելքին նվիրված մյուս գրքերում և հոդվածներում նույնպես ասվում է, որ Հիքսոսները, ներխուժելով Եգիպտոս, կատարում են անասելի բարբարոսություններ, կողտպտում և ավերում են երկիրը, այրում քաղաքները, քանդում տաճարները, սպանում կամ ստրկացնում եգիպտացիներին: Մ. թ. ա. XVII դարի երկրորդ կեսին տապալվում է նրանց իշխանությունը, Հիքսոսները կամ ձուլվում են տեղացիների հետ, կամ դուրս վռնդվում երկրից: Պատահական չէ, որ եգիպտական գրավոր աղբյուրներում Հիքսոսները որակվում են որպես «չարագործներ» ու «ոճրագործներ»:

Աղբյուրների տվյալները և ժամանակակից պատմագրության մեջ ընդունված տեսակետները, սակայն, ոչ մի արժեք չունեն Ալվազյանի համար: Եվ ահա նա, մասնագետ գիտնականների կարծիքով սեմական, խուտիական և այլ ցեղեր հանդիսացող Հիքսոսներին հայ է հայտարարում, թեև բոլորին հայտնի է, որ հայերը հնդեվրոպալեզու ժողովուրդ են: Ունատակ տալով լեզվական օրինաչափությունները, Ալվազյանը բռնադատիկ կերպով ճիշտաբան դամաճատում է և նրանից կորզում ճաշ բառը: Որպեսզի ապացուցի, թե Հիքսոսները հայերն են, նա գրում է, որ իբր Հիքսոսների և հայերի բառապաշարի միջև նմանություններ կան (էջ 73): Սակայն այդ «նմանություններից» վկայակոչում է ընդամենը երեքը: Ահա դրանք.

1. Ձեռագրագիրք մարտակառքը կոչեցին վուրատ տերմինով, որտեղ առաջին վանկը՝ «վար», հայերեն նշանակում է «ղեկ», «ղեկավարել», որտեղից էլ՝ «վարել» բայը:

2. Ճնեղոսի գետաբեմանում հիքսոսները հիմնեցին նոր մայրաքաղաք՝ և անվանեցին «Ավարիս»... «Ավար»-ի նշանակությունը հայերենում պարզ է:

3. Ճիքսոսյան թագավորներից մեկի անունը Հիան, լավ համեմատելի է հայերեն «հիանալի» բառի հետ» (էջ 101, 103):

Երեք խղճուկ փշրանքների օգնությամբ Ս. Այվաղյանը հայ-հիքսոսյան ծագումնաբանության (էթնոգենեզի) հարցերն է լուծում:

Ս. Այվաղյանի կողմից որպես հայերեն ներկայացվող երեք բառերից մեկը՝ մուրեյ բառի վար-արմատը, իրանական ՎՁԾ-«վարել, բռնել» բառից է (տե՛ս Շ. Աճառյան. ՀԱԲ, 4, էջ 312—314): Երկրորդը՝ ավար-ը, պահլավերեն է. այսինքն փոխառություն է պահլավերենի ճՎԱԴ «կողոպուտ» բառից (զուգահեռներն են՝ բելուզերեն ճՎԱԴ «ավար», «կողոպուտ», աֆղաներեն ճՎԱԴ «ավարի տալ, կողոպուտ». տե՛ս Շ. Աճառյան. ՀԱԲ, 1, էջ 355): Երրորդ բառի՝ հիան-ի կապակցությամբ պետք է Այվաղյանին տեղյակ պահենք, որ հայերեն «հիանալի» բառի արմատն է ոչ թե «հիան», այլ «հի» (հի-ան-ամ—հի-աց-եալ. ՀԱԲ, 3, էջ 92): Ահա, սրանք են եղել լեզվաբանական այն «հարց» կովանները, որոնց հիման վրա Ս. Այվաղյանն ստեղծել է իր ՀԻՔՍՈՍՅԱՆ-ՀԱՅԿԱԿԱՆ ծագումնաբանական արտաոց թեզը:

Սակայն նման՝ «գիտական» փաստարկներից բացի, Ս. Այվաղյանը դիմում է խորհրդավոր պատկերների ու գուշակությունների, լսենք նրան: «Եթե երբևէ ձեզ բախտ վիճակվի այցելելու Եգիպտոս, ուշադրություն դարձրե՛ք Միջին թագավորության հարստությունների վերջին փարավոնի մումիային ու սպիին, որ երկուսի է բաժանում փարավոնի դեմքը: Այն պատմական մեծ խորհուրդ ունի, ուշադիր դիտեցե՛ք...» (էջ 101):

Թե ինչ մեծ խորհուրդ է իր մեջ թաքցնում այդ սպին, դժվար է կոահել, քանի որ մենք գուշակությունների խրթին արվեստին ղեկ չենք տիրապետում, սակայն այնուամենայնիվ չենք կարող չզարմանալ, երբ հիքսոսյան Հիան թագավորի գանգը ներկայացվում է որպես «արմենոիդ», այլ կերպ ասած որպես «հին հայկական» (հայկազյան) թագավորի գանգ: Ինչպե՞ս որոշվեց Հիանի գանգի մարդաբանական տիպը կամ նրա «հայտնի» լինելը: Ո՞վ հանեց նրա գլխի սաղավարտը և ինչպե՞ս որոշեց «արմենոիդ» մարդաբանական խմբին պատկանելը, մնում է առեղծված: Հայտնաբար դիտության ընդունված էություններից բացի գոյություն ունեն իսկ այլ շափանիչներ, որոնք էլ առաջնորդ ունենալով՝ Այվաղյանը հանգել է ֆանտաստիկ եզրակացությունների:

Իր սենսացիոն «հայտնագործությունների» համար Այվաղյանը վկայակոչում է Եգիպտոս Կեսարացուն՝ Նա ընթերցողներին փորձում է հավատացնել, որ այն ամենը, ինչ ինքն է ասում հիքսոսների մասին, եգիպտացի Մանեթոնի հաղորդածն է, որ գրի է առել Եգիպտոս Կեսարացին: Սակայն այստեղ էլ ամեն ինչ աղավաղված է, Ահա մի օրինակ, Այվաղյանը դրում է, թե ըստ Եգիպտոսի Եգիպտոսը նվաճող «հիքսոսները» եկել են Հուրի երկրից, որի տակ բոլոր գիս-նսուկանները (sic) հասկանում են Հայկական լեռնաշխարհը» (էջ 99):

Մեղ կասկածելի թվաց այն, որ իբր թե Եգիպտոս Կեսարացին խոսել է Հուրի երկրի մասին՝ Նկատենք, որ իսկական երկրի և ժողովրդի մասին տեղեկությունները մեղ են հասել միայն XIX—XX դդ. հայտնաբերված ու վերծանված սևագիրք արձանագրություններից, որոնց մասին Կեսարացին չէր կարող տեղեկություններ ունենալ, եվ ահա մենք, նայելով Կեսարացու ԺԱՄԱՆԱԿԱՆԻՔԻ երկու հատորներն էլ նրանցում չգտանք հիշյալ վկայակոչումը: Այնուհետև ՀՈՒՐԻ (իրականում պիտի լինի ՆՈՒՐԻ) երկրի մասին ոչինչ չկա գրված:

Եվ այսպես, այն միակ աղբյուրը, որի հիման վրա Ս. Այվաղյանը կառուցել է իր տեսությունը, կեղծված է ամբողջությամբ: Եգիպտոս Կեսարացու մաս չկան ո՛չ Հուրի (սուրի) երկրի, ո՛չ էլ հայկ կամ հալ ժողովրդի մասին հիշատակություններ, այլ կան հիկկոս կամ հիկկոսովս անվանումներ, որոնք,

սակայն, Ս. Այվաղյանի մոգական գրչով... նենգափոխված են հայֆ-ի կամ հաֆ-ի, ի դեպ, Մովսես Խորենացին և հայ այլ պատմիչներ նույնպես, իմանալով նիկկուսի նշանակությունը, թարգմանաբար հովիւֆ են գրում:

Այլևայլ «փաստարկներից» հետո Այվաղյանը հանգում է հետևյալ եզրակացությանը: Մկյապիսով, եթե մենք մտովի տեղափոխվենք մ. թ. ա. XVIII դար և ուղևորվենք Հայկական լեռնաշխարհ՝ հիքսոսների հայրենիք (?), ապա այնտեղ կգանենք Հայք անունով երկիր ու ժողովուրդ և Հայասա պետություն, որոնց էթնիկական անունն իր մեջ պարունակում է «հիքսոսների» առավել ճիշտ անվանումը: Հետևաբար, արդեն ավելի շատ հիմքեր ունենք մտածելու, որ «հիքսոսները» հայերի նախահայրերն են Հայք-Հայասա երկրից» (էջ 99):

Նախ և առաջ ոչ մի հիմք չկա ասելու, թե հիքսոսների հայրենիքը եղել է Հայկական լեռնաշխարհը: Այնուհետև, մեր թվարկությունից առաջ XVIII դարում ՀԱՅԱՍՏԱ երկրի գոյության մասին մենք ոչ մի տեղեկություն չունենք: Միակ տեղեկությունը խեթական սեպագրերում հիշատակվող Խաթաթա (Խալաթա կամ Հայասա) երկրի մասին, վերաբերում է մ. թ. ա. XV—XIV և ոչ թե XVIII դարին, ինչպես ցանկանում է ներկայացնել Ս. Այվաղյանը: Սա արվում է այն դիտավորությամբ, որպեսզի Հայասա-ն հավասարեցվի Հայֆ-ի հետ, իսկ վերջինս էլ՝ ՀԱՅՔՍՈՍ-ՀԻՔՍՈՍ դարձվի:

Մասնագետները բազմիցս անդրադարձել են պատմության եգիպտական թատերաբեմում հայտնված հիքսոսների ծագման և լեզվական պատկանելության հարցին: Սակայն որքան էլ նրանք կռահում են, այնուամենայնիվ որպես սկզբնաղբյուր դարձյալ բոլորի համար մնում են Եգիպտոսի և Հովսեփոսի գործերը, որոնցում տվյալներ են բերված եգիպտական քուրմ Մանեթոնից: Ի դեպ, Եգիպտոս Կեսարացու գրքի գլուխներից մեկը հենց այդպես էլ վերնագրված է՝ «Ի Մանեթոնից եգիպտական յիշատակացն...»: Այստեղ՝ 213 էջում, հիքսոսները համարվում են փյունիկեցիների եղբայրներ (տե՛ս էին եղբայր փյունիկեցիք): Այս տեղեկությունը համադրելով մյուս՝ Քալդեոսների ասելն զնոցանէ, թէ արաբացիք էին՝ նախադասության հետ, կարելի է հանգել տվյալ ժողովրդի սեմական ծագում ունենալու թեզին, քանի որ և՛ փյունիկեցիները, և՛ արաբները պատկանում են սեմական լեզվաընտանիքին: Այսպես են մտածում նաև ժամանակակից գիտնականները և ընտրող է, որ նրանցից ոչ ոքի մտքով չի անցնում, թե հիքսոսները հայերն են: Բայց այդ բոլորը նշանակություն չունի դիվետանտական և անսանձ ֆանտազիայով ոգևորված Այվաղյանի համար:

Ի՞նչն է պատճառը, որ Այվաղյանը, անտեսելով ու կեղծելով պատմական փաստերը, փորձում է ապացուցել, թե հայերի նախնիները հիքսոսներն են կամ թե ուղղակի հայերը նույն հիքսոսներն են: Դժվար չէ նկատել, որ այստեղ հեղինակի մեջ պարզապես խոսում է անգիտության հետ շաղախված ազգային սնապարծությունը: Հիքսոսներին նա համարում է հին աշխարհի ամենազարգացած ժողովուրդը. ավելին, խոսում է նրա ժառանգությունից ստեղծագործական հանճարի» մասին, գրում է, թե Քաղաքակրթության պատմությունը, կարելի է ասել, անիմաստ է առանց հիքսոսների» և այլն (էջ 71): Այսպես, զավեշտական ձևով իդեալականացնելով հիքսոսներին, Այվաղյանը դրանով իսկ փորձում է իդեալականացնել հայ ժողովրդի պատմությունը, քանի որ, ըստ նրա, հիքսոսները նույն հայերն են:

Ազգային սնապարծությամբ պետք է բացատրել նաև հեղինակի այն պրնցիպները, թե հայերն են եղել ԱՌԱՋԻՆ թուրքերկաթ ձուլողները, ԱՌԱՋԻՆ ձիվարժեցնողները, ԱՌԱՋԻՆ մարտակառքեր ստեղծողները, ԱՌԱՋԻՆ այրուբեն հորինողները, ԱՌԱՋԻՆ տասնյակների թվային սխտամն ստեղծողները, ԱՌԱՋԻՆ օրացույցը ծագած գործադրողները և այլն, և այլն: Այս անհիմն հայտարարությունները մերթ ընդ մերթ ուղեկցվում են վկայակոչումներով, որպեսզի ասածներին հավաստի տեսք տրվի: Այսպես, Ս. Այվաղյանը գրում է, որ իբր Քրստ եգիպտական քուրմ Մանեթոնի՝ ձիերի ընտելացումն առաջին անգամ կատարվել է Հայաստանում» (էջ 10): Միանգամայն կամայական եզ-

ուակացություն. քանի որ այդ մասին Մանեթոնից չկա ոչ մի գրավոր հիշատակություն: Ի դեպ, ձեռնի վարժեցման վերաբերյալ գիտությունը հայտնի է խուռիներենից խեթերեն թարգմանված վիճակում մեզ հասած ԿԻԿՈՒԼԻԻ «Ձիավար-ծուծության ձեռնարկը», (մ. թ. ա. XVI դար) Կիկուլիի տեքստում կա ոչինչ չկա առաջ քաշված թեզի մասին: Ուրեմն նորից ֆանտազիա:

Ըստ Ալվազյանի, աշխարհին հնչյունական այբուբեն «պարզեցողները» հայերն են եղել, բայց շուտով, հակասելով ինքն իրեն, նա գրում է. որ հայկական հնագույն այբուբենը «մոռացվեց», որին «ենպաստել է Բաղախանի իրադրությունը» (էջ 75): Այդ իսկ պատճառով էլ «այբուբենի սկզբունքները ձայնարկման (sic) սկզբունքին միացնելը հայերի մոտ ուշացավ» (էջ 75): Ուրեմն ստացվում է, որ հայերը տալիս են իրենց հնարած այբուբենը (կամ հնչյունագրերը) սյուս ժողովուրդներին (եգիպտացիներին, բոասմիներին), իսկ իրենք դրանից զերկված են մնում շուրջ 2200 տարի, մինչև Մաշտոցյան գրերը: Ընդ որում «փյունիկեցիները կամ, թերևս, հույները, առաջինը հիքսոսյան այբուբենի սկզբունքը միացրին բաբելոնյան ճեշեղության (sic) սկզբունքի հետ, մինչդեռ բուն Հայաստանում այդ սկզբունքը ձայնարկության (?) բացակայության պատճառով տեղը զիջեց սեպագրերին, իսկ հետո հունական, ասորական և այլ գրերի. որոնք միայն մի առավելություն ունեին՝ հնչեղություն (sic) և բազում թերություններ՝ կապված հայոց լեզվի արտահայտչական յուրահատկությունների հետ» (էջ 75): Այսպիսի «հայտնագործություններով» է «հարստացնում» Ալվազյանը հայոց գրերի պատմությունը, վերագրելով Մաշտոցին Հին ՀԱՅԿԱԿԱՆ ԱՅԲՈՒՐՆԵՆԸ վեց ձայնավորների և կիսաձայնների նշաններով լրացնողի դերը միայն, ընդ որում այդ նշանները «գրեթե լրիվ համընկնում են բաբելական սեպագրերի հետ» (նույն տեղում, էջ 75): Ահա թե «հայրենասեր» Ալվազյանը, չնայած իր ղեկավարած հայտարարություններին, իրականում ինչպիսի ծառայություն է մատուցում նրանց, ովքեր ջանասիրաբար ձգտում են նսեմացնել Մաշտոցի գերը մշակույթի պատմության մեջ:

Իրեն հատուկ համոզվածությամբ Ս. Ալվազյանը գրում է. «...մ. թ. ա. VIII դարի վերջին (ըստ երևույթին պետք է գրեր XVIII—ն. Մ.) Հայաստանում հայտնագործվել է աշխարհում առաջին այբուբենը, որը կապվել է ԵՐԿԱԹԻ ԴԱՐԻ ԳԻՐ՝ ԵՐԿԱԹ-ԱԳԻՐ» (էջ 11, նաև 76): ԵՐԿԱԹ-ԱԳԻՐ աւրմիներ հեղինակի կարծիքով նշանակում է ԵՐԿԱԹԻ ԴԱՐԻ ԳԻՐ, մինչդեռ իր անունը նա ստացել է ԵՐԿԱԹՈՎ փոքրագրվելու պատճառով, «Երկաթագիր—դրեալ գրչաւ երկաթեաւ» (ՆՃԲ, Ա, էջ 686). «գլխաբեր» հեղինակը նկատում անգամ չի կրկն նայելու հանրահայտ բառարաններն ու հանրագիտարանները: Ավելացնենք, որ ԵՐԿԱԹԻ ԴԱՐԻ հասկացողությունը չէին կարող ունենալ մ. թ. ա. XVIII դարի մարդիկ, քանի որ նման բաժանումը (բարի, բոռնդի, երկաթի դարեր) նոր ժամանակների գիտության մեջ է կատարվել և անվանումն էլ նոր է տրվել: Ուրեմն հայոց կողմից հնագույն ժամանակներում հորինված գրերը չէին կարող կոչվել ԵՐԿԱԹԻ ԴԱՐԻ ԳԻՐ՝ իբր թե երկաթի դարում կիրառվելու պատճառով:

Գրքույկի հեղինակն այնուհետև մեղ հավատացնում է, որ ինքր մի շարք հայտնագործությունների հետ մեկտեղ հայտնաբերվել է նաև ՎԱՆԿԱՅԲԵՆԱԿԱՆ ԳԻՐԸ, որի գլուխը նա վերագրում է մ. թ. ա. XVIII—XVI դարերին: Ս. Ալվազյանը զարմանալի հեշտությամբ է «բացում գաղտնիքները»: Սովորաբար հին գրերը վերծանում են որևէ ԲԻԼԻՆԳՎԱՅԻ (երկլեզվյան արձանագրության) օգնությամբ, սակայն Ս. Ալվազյանի «հորինված» մեթոդը բոլորովին կարիք չունի նման «ամանութների»: Ահա «գլխաբեր» կատարած աշխատանքը. «Աղյուսի զաղափարագրերը վերծանվեց համակողմանիորեն (Իհարկե, կանոնավոր հայերենով պիտի լինե՞ր «զաղափարագրերը վերծանվեցին—ն. Մ.): Համեմատություն անցկացվեց Մեծամորի արձանագրությունների նկարագրափարագրային համակարգի հետ, որի արդյունքը եղավ նրանց միջև ծագումնաբանական կապի հայտնագործումը: Այնուհետև այդ նշանները համահարաբերակցվեցին փոքրասիական գրչության մի շարք համակարգերի հետ»: Ի՞նչ կարող էր տալ հեղինակին այդ նշանների համեմատությունը «փոքր-

ասիական գրչության մի շարք համակարգերի հետ», երբ փոքրասիական ոչ մի լեզու և գրչության համակարգ Ս. Ալվադյանը չգիտե: Բայց նա, օհրաշք, «կարգում է» եռանկյունի մի խեցեքեկորի վրայի նշանները այսպես. «Գաբրիս, որը լուծույթներ է պատրաստում իր անոթներում»: Տեսնելով, որ այս «ընթերցումը» չի բավարարի քիչ թե շատ տրամաբանություն ունեցող ընթերցողին, նա հիշյալ «տողերը» վեր է ածում «արխաիկ գրարարի» և ինքնազոհ հայտարարում. «Սա հնչում է հետևյալ կերպ՝ «ԳԱՐԻՍ ԼՈՔ Ի ԴԱՓՍ» էջ (66): Կատարյալ ձեռնածություն, որի վրա պետք է միայն ծիծաղել:

Ինչպե՞ս գտավ հեղինակը այս ընթերցման բանալին, ո՞ր Բիլինգսլենի հիման վրա: Այս բացարձակ շինծու և զավեշտական «ընթերցումը» հարկավոր էր «տպավորություն» ստեղծելու համար, որպեսզի հեղինակը պատենտավորի իր «գլուտի» վաղեմիությունը, որպես «Մաշտոցյան գրերից 2500 տարով ավելի հին» հայկական հնչյունական արձանագրություն (էջ 66): Սա դեռ ամենը չէ: «Տեքստի ընթերցումը» հիմք է հանդիսացել հետևյալ եզրահանգումներն արձանագրելու համար. «Աղյուսի գաղափարագիրն արտացոլում է ոչ միայն Մեծամորի յուրահատկությունը՝ նրա խոշորագույն հանքամետաղագործական համակառույց լինելը, այլև այդ ժամանակաշրջանի ԻՐԱՎԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ հարաբերությունները» (էջ 66): Ինչպե՞ս կարող են թվով 8—9 ինչ-որ նշաններ: (Եթե կապակցված տեքստ չէ այն), ԻՐԱՎԱԿԱՆ եվ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ հարաբերություններ դրսևորել:

Հեղինակը գրում է. «Մեծամորի կավե աղյուսի գաղափարագիրը՝ զաղափարագրային շրջանի առաջին հայկական հնչյունական գիրը, միշտ իր պատվովոր տեղը կունենա հայ գրի և գրչության պատմության մեջ» (էջ 68): Եթե հայտնաբերված նշանները ՀնԶՅ/ԻՆԱԿԱՆ ԳՐԵՐ են, ապա չեն կարող միաժամանակ ԳԱՂԱՓԱՐԱԳՐԵՐ լինել: Կամ մեկը, կամ մյուսը: Սա իհարկե մատնում է հեղինակին՝ ԳԱՂԱՓԱՐԱԳՐԵՐԻ մասին տարրական ԳԱՂԱՓԱՐԻՑ զուրկ լինելու փաստը:

Գրքույկում գետեղված է (էջ 67) հիքսոսյան, հայկական, բրահմի և փյունիկյան ԱՅՐՈՒԲԵՆՆԵՐԻ համեմատական աղյուսակը, որտեղ հեղինակը, բաղդատելով 21 նշաններ, ցանկանում է ինչ-որ նմանություններ գտնել դրանց միջև, և բոլոր այբուբենների մայրը հայկականը համարել: Դարձյալ դիլետանտական անսանձ ֆանտազիայի պտուղներից մեկը:

Ալվադյանի հորինվածքը պարունակում է հակասական, հակատրամադանական ու անգիտությունից բխող պնդումներ, անընդունելի, գիտության հետ կապ չունեցող շատ թեզեր, ինչպես օրինակ՝ չեն եղել ո՛չ ուրարտերեն լեզու, ո՛չ ուրարտական պետություն: Սակայն հեղինակի «գլուխգործոցը» այնուամենայնիվ մնում է նրա այն «գլուտը», թե հայերի նախնիները հիքսոսներն են, այն վաշկատուն ցեղերը, որոնք ներխուժելով Եգիպտոս անասելի կողոպուտի և ավերի ենթարկեցին այն:

Հայտնի է, որ հայ ժողովուրդը աշխարհի հնադույն և քաղաքակիրթ ժողովուրդներից մեկն է: Ո՞ւմ հայտնի չէ, որ նա մեծ ներդրում ունի համաշխարհային գիտության և մշակույթի զանազանում, որի մասին գրել են հայ և օտարերկրյա բոլոր նշանավոր հեղինակները: Այս ամենից հետո արդյոք կարիք կա՞ ազգային սնապարծության դիրքերից, առանց հիմքի, արհեստականորեն «հարստացնել» կամ ավելի «հնացնել» հայ ժողովրդի առանց այն էլ իսկապես հարուստ պատմությունը: Կարծում եմ, մենք պետք է մերժենք նման «արջի ծառայությունը»:

Քիչ զարմանք չի պատճառում նաև հետևյալ հանգամանքը: Ալվադյանի գրվածքին կցված է ընդամենը 27 տողից բաղկացած «Երկու խոսքը», որի հեղինակ, հայագետ Ս. Տ. Երեմյանը ողջունում է մեզ այստեղ զբաղեցնող գրքույկի լույս ընծայումը: Մի՞թե նա բաժանում է Ալվադյանի հակագիտական, հակապատմական թեզերը: Նկատենք, որ Ս. Երեմյանը տասնյակ տարիներ շարունակ զբաղվել է հայ ժողովրդի ծագման հարցով, բայց մինչև օրս ո՛չ մի տեղ և ո՛չ մի խոսք չի ասել հայերի հիքսոսյան ծագման վերաբերյալ: Արդյո՞ք

պետք է ենթադրել, որ նա հրաժարվում է իր տեսակետներից և այժմ, «ուսումնորվելով» «նոր գյուտերով», ինքը ևս հիբսոսներին հայեր է համարում:

Ավելի պարզ ու որոշակի է արտահայտվել գրքույկի գրախոս և միաժամանակ խմբագիր, պատմական գիտությունների թեկնածու Լ. Շահինյանը, որն անվերապահորեն գրել է. «...համոզի՛ կերպով ե նոր փաստերով վերահաս (?) ապացուցվում է... որ Եգիպտոս արշաված և շուրջ 150 տարի (1710—1780 թթ.) անտեղ ընթաց հիբսոսները Հայաստանից գնացած հայեր են եղել» (էջ 110): Մենք կարծում ենք, որ գրախոս-խմբագրի պառնականությունն էր լուրջ մոտեցում ունենալ իր խնդրի նկատմամբ. չորսսու անհեթեթ մտքերով լի գրքույկի հեղինակին, այլ ցույց տալ, որ նրա առև և մյուս արտաոտոց «թեզեր» ու մի կապ չունեն գիտության հետ: Պետք է որ տարրերություն դրվեր սիրողական ֆանտաստիկի և իսկական գիտական մտածողության միջև:

Եգրապացությունը պարզ է. պետք է կանալ ճանապարհ րացել դիւանաների և կեղծ գիտականների համար, ովքեր «հայրենասերի» համարվ ձեռք բերելու նպատակով նենգափոխում են պատմությունը և թյուրիմացության մեջ գցում ընթերցող հասարակայնությանը:

Ն. Ա. ԿԿՐՏՅԱՆ

АНТИНАУЧНЫЙ «ТРУД»

Н. А. МКРТЧЯН

Резюме

В книжке С. Айвазяна «Из истории культуры древнейшей Армении» (Ереван, 1986 г.) обсуждаются кардинальные для истории и культуры Армении и, пожалуй, для всего Древнего Востока, проблемы. Но, к сожалению, цели и намерения автора далеко не научны, что не позволяет ему сделать научные заключения и приводит к фантастическим домыслам. В ней искажаются давно установленные исторические и лингвистические истины ради ложных арменоцентрических концепций. Книжка изобилует антинаучными сенсационными «открытиями». Вопреки данным источников и мнению ученых автор своевольно объявляет гикесов армянами, хотя известно, что гикесовы принадлежат к семитским и хурритским племенам, а армяне — индоевропейцы. Айвазян чрезмерно идеализирует гикесов. Так, по его мнению, гикесовы (т. е. армяне) первыми подарили человечеству звуковую алфавит, идеографическое письмо: они в первые плавил чугуны в начале II тыс. до н. э. открыли серебро и железо для человечества, приручили коней и стали применять боевые колесницы, железное оружие, десятизначную систему числительных, календарь и так далее, и тому подобное. «Удивителен тот дар, который принёс человечеству созидательный гений гикесов» и «история цивилизации можно сказать, бессмысленна без гикесов», то есть армян, — заключает автор.

Очень забавны лингвистические анализы (попытки этимологии), которыми он пытается доказать родство армянских и гикесовских слов. Свои «открытия» автор основывает на источниках, в которых ничего подобного нет. Айвазян сознательно прибегает к явному подлогу. Вызывает удивление то обстоятельство, что издательство «Лунес», в чье обязательство входит издание учебников и пособий, приняло это издание, не посоветовавшись с научными учреждениями.